



*Շրջակա միջավայրի նախարարության  
«Հիդրոոդերոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՏԵԼՆԵՎՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2023*

---


*Հոկտեմբերի երրորդ տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոոդերոլոգիայի բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերոլոգիաների կազմակերպության կազմակերպության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան*

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոկտեմբերի երրորդ տասնօրյակում հանրապետությունում օդի միջին ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 3-5 աստիճանով:




Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները գրանցվել են Տավուշում՝ +26...+28°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +18...+20°C, նախալեռնային շրջաններում՝ +24...+26°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +28...+30°C, նախալեռնային շրջաններում՝ +22...+24°C, Շիրակում՝ +18...+22°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +16...+18°C, նախալեռնային շրջաններում՝ +20...+22°C, Գեղարքունիքում՝ +17...+22°C, Լոռիում՝ +23...+26°C, Արմավիրում՝ +25...+27°C, Արարատում՝ +26...+28°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +17...+19°C, նախալեռնային շրջաններում՝ +20...+25°C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանը դիտվել են Տավուշում՝ +5...+9°C (Դիլիջան՝ +2°C), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 0...-1°C, նախալեռնային շրջաններում՝ +3...+5°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +6...+10°C, նախալեռնային շրջաններում՝ -1...+4°C, Շիրակում՝ -1...+2°C (Աշոցք՝ -6°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ -3...+2°C, նախալեռնային շրջաններում՝ +4...+6°C, Գեղարքունիքում՝ -3...+2°C, Լոռիում՝ 0...-3°C (Օձուն՝ +3°C), Արմավիրում՝ +2...+4°C, Արարատում՝ +4...+8°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 0...-2°C, նախալեռնային շրջաններում՝ +4...+7°C:

Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Գեղարքունիքում կազմել է 1-2մմ (6-10%), Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 1մմ (8%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 3մմ (8%), Սյունիքում՝ հովտային շրջաններում և նախալեռնային շրջաններում՝ մինչև 1մմ (4-11%), մնացած շրջաններում տեղումներ չեն դիտվել:

## Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Հոկտեմբերի երրորդ փասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային և առանձին նախալեռնային շրջաններում գրանցվել են  $-3...-5^{\circ}\text{C}$ , Արարատյան դաշտում, Տավուշի հովտային շրջաններում, Արագածոտնի, Վայոց ձորի նախալեռներում՝  $+1...+5^{\circ}\text{C}$ , Սյունիքի հովտային շրջաններում՝  $+6^{\circ}\text{C}$ :



## Գյուղատնտեսական մշակաբույսեր

Տասնօրյակի ընթացքում հանրապետությունում շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքահավաքը և դաշտային աշխատանքները:

Լեռնային շրջաններում առաջացել է աշնանացան ցորենի երրորդ փերևը, նախալեռներում՝ հանգուցային արմատները, փեղ-փեղ թփակալել է, հովտային շրջաններում այն ծլել է:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել հացահատիկի աճի և զարգացման համար:

**Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ**

